Հայտարարություն

«ՀՀ Լոռու մարզի Դսեղի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման խորհուրդը հայտարարում է մրցույթ՝ հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղն զբաղեցնելու համար:

1. Հաստատության տնօրենի պաշտոնի համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններն են՝
1) ՀՀ քաղաքացիությունը.
2) ուսումնական հաստատության ղեկավարման իրավունքը (հավաստագիր):
2. Մրցույթին մասնակցելու համար հավակնորդը ներկայացնում է՝
1) դիմում՝ հաստատության խորհրդի նախագահի անունով.
2) Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը.
3) հաստատության ղեկավարման իրավունքի հավաստագրի պատճենը.
4) տվյալ հաստատության զարգացման ծրագիրը թղթային և էլեկտրոնային տարբերակներով.
5) ինքնակենսագրություն:
Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:
Փաստաթղթերն ընդունվում են «ՀՀ Լոռու մարզի Դսեղի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում **2021 թվականի հոկտեմբերի 5-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ,** ամեն օր՝ ժամը 9°° -ից մինչև ժամը 16°° -ը, բացի հանգստյան (շաբաթ, կիրակի) և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝տոնական և հիշատակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2021 թվականի նոյեմբերի 8-ին՝ ժամը 15°°-ին,** «ՀՀ Լոռու մարզի Դսեղի Հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, ՀՀ Լոռու մարզ գ. Դսեղ 3 փ շենք 16:

Տեղեկությունների համար դիմել հեռ. 098 07 23 38, Էլ. փոստ missis.arus@list.ru: